25.06.2025թ.

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ
ՈՒՂԵՐՁԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ ՆՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻՆ

Սիրելի նորակոչիկներ

Մեկնարկել է 2025թ. ամառային զորակոչը, և Սևան համայնքում դուք առաջինն եք, որ պատիվ ունեք համալրելու Հայոց բանակի շարքերը:

Հունիսի 25-րդ օրը մի այլ խորհուրդ ունի, որը միավորում է հպարտության ու հայրենիքի պաշտպան լինելու զգացողությունները: Դուք դառնալու եք մեր բանակի մի մասնիկն ու կենսունակ ուժը՝ այն ամրացնելով ձեր ներկայությամբ, ձեր արժանապատիվ ծառայությամբ:

Ես ցանկանում եմ, որ ձեզանից յուրաքանչյուրը, զինվորագրվելով մեր զինված ուժերին, քաջ գիտակցի իր դերը ու ծառայության երկամյա տարիներն անցկացնի հայրենիքի տերն ու պաշտպանը լինելու պատվախնդրությամբ:

Իհարկե, առջևում նաև դժվարություններ են ու փորձություններ, բայց միևնույն ժամանակ այդ ամենը հաղթահարելու շնորհիվ է, որ ձեռք եք բերելու նոր որակներ, դառնալու եք առավել կայացած ու ինքնավստահ:

Սիրելի նորակոչիկներ

Դուք և ձեր ընկերները մեր համայնքի լավագույն երիտասարդներից եք, մենք հպարտությամբ ենք ձեզ ճանապարհում, միաժամանակ կիսում ենք ձեր ծնողների ու հարազատների հուզմունքն ու անհանգստությունը:

Հարգելի ծնողներ,

Գիտեմ, որ անբացատրելի են ձեր ապրումները, որոնց այս պահին միախառնվել են հուզմունքին և հպարտությանը: Մենք ձեր կողքին ենք, ու մեր օրհնանքներն ու բարեմաղթանքները ձեր զավակների հետ են:

Սիրելի նորակոչիկներ

Մենք հավատում ենք, որ ձեր երկամյա ծառայությունը լինելու է բարեհաջող: Մեր հայրենիքի անվտանգությունն ու ապահովությունն էլ այսուհետ նաև ձեր ձեռքերում են:

Հայրենիքի զինվոր լինելը մեծագույն պատիվ է, և այսօր այդ պատվին արժանանում եք նաև դուք՝ կրելով հայրենիքի պաշտպանը լինելու այն մեծ պատգամը, որ ձեր ավագ ընկերներն են փոխանցել ձեզ՝ պաշտպանելով հող հայրենին ու բռնելով անմահության ճանապարհը:

Սիրելի նորակոչիկներ

Ձեզ մաղթում ենք խաղաղ ու անվտանգ, արժանապատիվ ու բարի ծառայություն, բազկի ուժ, մտքի զորություն, հայրենիքի զինվորին վայել պահվածք:

Սևան համայնքը ճանապարհում է ձեզ մեծ հպարտությամբ, օրհնանքների տարափով և անհամբեր սպասելու է ձեր տունդարձին:

Աստծո աջը՝ ձեզ, մեր ժողովրդին ու հայրենիքին պահապան: